

24/12/2013
համար 309 Ն

**«ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ
ԾԱԽՍԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԱՓԸ»
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/12-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
15.07.14թ. թիվ 163 Ն, 09.09.14թ. թիվ 240 Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝

Նպատակ ունենալով ապահովել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի
ակտիվների օգտագործման արդյունավետությունը, թափանցիկությունն ու
վերահսկելությունը, ինչպես նաև պարտադիր կենսաթոշակային ֆոնդի
կառավարիչների միջև համադրելությունը,

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը,

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով,
«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ
հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

(Նախաբանը փոխ. 15.07.14թ. թիվ 163 Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.)

1. Հաստատել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին
կատարվող ծախսերի կազմն ու առավելագույն չափը» կանոնակարգ 10/12-ը՝
համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/12
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն կանոնակարգը սահմանում է այն ծախսերի կազմը (բացառությամբ կառավարչի պարգևավճարի) ու դրանց առավելագույն չափը, որոնք կարող են կատարվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին:
- Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱԽՍԵՐԸ

- Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին, բացի կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից գանձվող վճարից (կառավարչի պարգևավճար) և երաշխիքային ֆոնդին վճարվող պարբերական երաշխիքային վճարներից, թույլատրվում է իրականացնել այդ ֆոնդի կառավարման հետ կապված հետևյալ ծախսերը.
 - ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը, այդ թվում՝ գործարքների կնքման հետ կապված վճարները (միջնորդավճարները), ինչպես նաև արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցումների գծով վճարները,

- ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գծով վճարվելիք տոկոսները, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսները:
- ֆոնդի տարեկան արտաքին աուդիտի վճարը՝ սույն կանոնակարգի 3-րդ գլխին համապատասխան:

(3-րդ կետը լրաց. 09.09.14թ. թիվ 240 Ն)

ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

- Սույն կանոնակարգի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փաստացի ծախսերի տարեկան ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքի 0.1 տոկոսը: Սույն կանոնակարգի իմաստով՝ ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքը տվյալ տարվա համար ֆոնդի զուտ ակտիվների արժեքների միջին թվաբանական մեծությունն է, որը որոշվում է տարվա ընթացքում հաշվարկված՝ ֆոնդի զուտ ակտիվների արժեքների հանրագումարը բաժանելով տվյալ ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման պարբերականության (տարվա ընթացքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկների քանակի) վրա:

(4-րդ կետը փոխ. 09.09.14թ. թիվ 240 Ն)

5. Սույն կանոնակարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստացի ծախսի (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) տարեկան ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել՝

- 1) 12 միլիոն դրամը, եթե տվյալ կառավարչի կողմից կառավարվող՝ անկախ աուդիտի ենթակա բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքների հանրագումարը չի գերազանցում 25 միլիարդ դրամը,
- 2) 12 միլիոն դրամի և 25 միլիարդ դրամը գերազանցող գումարի 0,01 տոկոսի հանրագումարը, եթե տվյալ կառավարչի կողմից կառավարվող՝ անկախ աուդիտի ենթակա բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքների հանրագումարը գերազանցում է 25 միլիարդ

դրամը, սակայն չի գերազանցում 50 միլիարդ դրամը,

3) 14,5 միլիոն դրամի և 50 միլիարդ դրամը գերազանցող գումարի 0,005 տոկոսի հանրագումարը, բայց ոչ ավելի, քան 17 միլիոն դրամը, եթե տվյալ կառավարչի կողմից կառավարվող՝ անկախ աուդիտի ենթակա բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքների հանրագումարը գերազանցում է 50 միլիարդ դրամը:

(5-րդ կետը լրաց. 09.09.14թ. թիվ 240 Ն)

6. Սույն կանոնակարգի 5-րդ կետով նախատեսված առավելագույն մեծությունը կառավարչի կողմից կառավարվող՝ անկախ աուդիտի ենթակա յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի նկատմամբ կիրառվում է համամասնորեն՝ ըստ այդ ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի:

(6-րդ կետը լրաց. 09.09.14թ. թիվ 240 Ն)

7. Սույն կանոնակարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստացի ծախսը ըստ կառավարչի կողմից կառավարվող՝ անկախ աուդիտի ենթակա յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի հաշվեգրվում է համամասնորեն՝ ըստ այդ ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի:

(7-րդ կետը լրաց. 09.09.14թ. թիվ 240 Ն)